LEGENDS TRAIL

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Զրույցներ Լեգենդների արահետից

Հրատարակվել է «Մարդը կարիքի մեջ» չեխական հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ «ԵՄ-ն զբոսաշրջության համար. արկածային տուրիզմի զարգացում պատմական Սյունիքում» ծրագրի շրջանակում: Ծրագրի իրականացման գործընկեր՝ «ԱՐԿ» բնապահպանական հասարակական կազմակերպություն (2018-2021):

Լեգենդներն ու զրույցները հավաքագրվել են 2018-2019թթ-ին՝ «ԱՐԿ» բնապահպանական և «Գորիսի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Խմբագրումը՝
Քրիստինա Կրիժանովայի և Շուշանիկ Ներսեսյանի
Նկարազարդումը՝ Աղվան Ստեփանյանի

Հուլիս, 2020

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Զրույցներ Լեգենդների արահետից

ԵՄ-ն զբոսաշրջության համար.
արկածային տուրիզմի զարգացում պատմական Սյունիքում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երբևէ մտածե՞լ եք փախչել ամբոխից դեպի հեռու մի վայր և զբաղվել արկածախնդրությամբ՝ ժամանակավորապես մոռանալով մոդեռն աշխարհի մասին: Այս գիրքը հետաքրքրաշարժ ճամփորդություններով ու ժամանակի և տարածության միջով կուղեկցի ձեզ դեպի հարավային Հայաստանի պատմական շրջան: Թաքնվելով Սյունյաց լեռներում՝ կարող եք անմոռանալի ժամանակ անցկացնել բացահայտելով բարձր լեռներն ու խորը կիրճերը, լքված գյուղերը, քարանձավները, կամուրջները և հինավուրց վանքերը, միաժամանակ ապրել տեղացիների հետ և հաց կիսել ու սնվել միայն գյուղացիների այգիների անուշահամ բերքով:

Ավելի քան 200 կմ երկարությամբ ձգվող Լեգենդների քայլարշավային արահետը՝ անարատ բնությամբ և հայկական հյուրընկալությամբ սպասում է ձեզ Խնձորեսկի ճոճվող կամրջից մինչև Խուստուփ լեռն ընկած հատվածում:

Հետևե՛ք Լեգենդների արահետին և բացահայտե՛ք գյուղերի հերոսների կյանքը՝ կրելով նաև աշխարհի ամենահին մշակույթներից մեկն ունենալու պատիվը:

Գորիս և Տաթև համայնքներ

ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ԱՐԱՀԵՏ

ԳՈՐԻՍ/ԿԼՊԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄ

ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ԱՐԱՀԵՏԻ ԳՅՈՒՂԵՐ

ՀԱՐԱՆ ԳՅՈՒՂԵՐ

LEGENDS TRAIL

Կապան համայնք

1. Ակներ

Միջնորդ սարը

Երկու եղբայր իրար հետ կռվում են ու իրարից խռով մնում: Սակայն մեկ օր միասին պիտի գնային սար՝ իրենց ձմեռվա խոտը հնձելու: Ճաշի ժամին մեծ եղբայրը ձայն է տալիս, ուզում է կանչել փոքր եղբորը:

-Ա՛յ սարեր, էն մի հոգուն ասացե՛ք թող գա՛ ու հա՛ց ուտի:

Փոքրն էլ թե.

-Ա՛յ սարեր, այդ կանչողին ասացե՛ք, որ ես իմ հացը կերել եմ, թող ինքն ուտի:

2 Բարձրավան

Բարձրավան գյուղը բավականին հին է: Գյուղի և նրա շրջակա տարածքներում եղել են հին բնակավայրեր: Որոշ հեղինակներ գտնում են, որ Բարձրավանը «Սյունիքի պատմություն» աշխատանքի հեղինակ Ստեփանոս Օրբելյանի նշած Երիցաթումբ գյուղն է:

Գյուղի անվան վերաբերյալ պահպանվում են ժողովրդական ավանդազրույցներ:

Ենթադրում են, որ գյուղի տարածքում գտնվող երեք բլուրների կամ թումբերի անունից է գյուղի անվանումը՝ երեք թումբ (գրաբարում երից նշանակում է «երեք»):

Այդ թմբերը հին ժամանակներում սրբատեղիներ են եղել, և մարդիկ այդ սարաթմբերի վրա ծիսակատարություններ են արել: Մյուս ավանդազրույցի համաձայն՝ գյուղը կոչվել է Երիցթումբ, քանի որ այն եղել է մի կրոնավորի՝ երեցի տարածք, որ հետագայում վերածվել է գյուղի: Երրորդ ավանդազրույցն այն է, որ գյուղը, գտնվելով շրջակա տարածքի կենտրոնական դիրքում և լինելով ամենամեծը մյուսների համեմատությամբ, կոչվել է Երեց՝ «մեծ, առաջնակարգ, նախապատվելի» թումբ:

Վերջերս՝ հողային աշխատանքների ժամանակ, կավե դագաղներում հայտնաբերվել են չորս դի՝ երկու մեծահասակի և երկու մանկահասակի: Կա կարծիք, որ նշված գերեզմանները շուրջ 2500 տարվա հնություն ունեն:

Ասում են, որ գյուղը հնում շեն է եղել. շրջապատող անտառների տեղը վարելահողեր են եղել, իսկ մերձակա տարածքում՝ յոթ ջրաղացներ:

Գյուղացիները պատմում են, որ իրենց գյուղը հարուստ է եղել, այդ պատճառով շատերն են ցանկացել գրավել այն: Մի ավանդազրույցի համաձայն՝ եղել է ժամանակ, որ գյուղը բնակեցված է եղել քրդերով, որի պատճառով գյուղն անվանվել է Քյորդակ, հետո գյուղը հայաբնակ է դարձել: Ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով գյուղի բնակիչներից շատերը տեղափոխվել են հարևան գյուղեր, տարբեր քաղաքներ: Եղել է նաև, որ ուրիշ բնակավայրերից էլ են եկել և բնակվել Երիցթմբում: Օրինակ՝ 1866թ. Շինուհայրից ութ, Տաթևից մեկ, Խոյից մի քանի ընտանիք եկել և բնակվել են Երիցթմբում: Պատմում են նաև, որ Խոյից եկածների մեջ եղել է Զոհրապ անունով մի զորական, որի նախաձեռնությամբ գյուղում հիմնվել են պաշտպանական կառույցներ:

3 Գորիս

Զանգեզուրի ավանդազրույցը

Լենկ-Թեմուրի հորդաները մոտենում են Սյունիքին: Սյունյաց մելիքներից մեկն իր իշխանությունը, գանձերն ու տիրույթները պահպանելու համար ժամանում է թշնամու ճամբար և ներկայանում մեծ նվաճողին. «Լենկ-Թեմուրն ապրա՛ծ կենա, եկել եմ ծառայելու և քեզ օգտակար լինելու»: Թեմուրի հարցին, թե ինչով նա կարող է ծառայել իրեն, իշխանը պատասխանում է. «Ամեն անգամ, երբ թշնամին մտնում է մեր լեռնաշխարհ, Տաթևի վանքի զանգերը տագնապի ազդանշանով զգուշացնում են վտանգի մասին և ժողովում Սյունյաց քաջերին: Նախ պետք է այդ զանգերի ձայնը կտրել, ապա՝ հնարավոր է նաև գրավել այս անպարտելի ու շեն աշխարհը»:

Լենկ-Թեմուրը դավաճանին խոստանում է փող ու իշխանություն, և վերջինս իր ծառաներին հրամայում է գաղտագողի անցնել վանք և գիշերը մեծ զանգի տակ կրակ վառել: Լուսաբացին թշնամու հորդաները լցվում են Սյունյաց շեները: Գուժկանի կանչից վանականներն արթնանում են, պարզում եղելությունը և շտապում տագնապ ազդարարելու, բայց տեսնելով կրակից շիկացած զանգը՝ ասում են. «Զանգն իզուր է, զանգը զուր...»: Դրանից հետո Սյունյաց աշխարհն անվանում են Զանգեզուր:

4 Հալիձոր

Հալիձորը հարուստ է պատմական շինություններով: Առաքել Դավրիժեցին և Աբրահամ Գ կաթողիկոսը հավաստում են, որ Հալիձորի դիմացի անտառում եղել է Թանահատ անունը կրող վանք, որը ինչ-ինչ պատճառներով չի պահպանվել, սակայն Հալիձոր գյուղի հնաբնակներից ասում են, որ Օվենի անտառում կա «Պակի տեղ»: «Պակի» նշանակում է փոս: ենթադրելի է, որ այն բագին բառից է: Հալիձոր գյուղում՝ Որոտանի ձախ ափին կանգնեցրած կոթողի արձանագրությունը վկայում է, որ ոմն Գրիգոր 1265թ-ին կառուցել է առու: Կա «Խաչին խութ» և նրա վրայի խաչքարը՝ արձանագրությամբ, որից երևում է, որ ոմն Գրիգոր եկեղեցի է կառուցել Ամառուի նորավանքում:

Հարսնաձոր

Հալիձորի կիրճում է գտնվում Հարսնաձորը, որի անվան հետ կապված լեգենդը պատմում է.
Աղվանքի Երեց իշխան Վարազ Տրդատի դուստր Շահանդուխտին հարս են խնդրում Թորգոմյան տնից: Նա դուրս է գալիս հայրենի տնից՝ ուղևորվելու իր նոր բնակատեղին: Երբ օրիորդն ուղեկցող խմբով անցնում էր քարաժայռի գլխով, անսպասելի նրա վրա հարձակվում են օտար զինյալներ:

Ավանդությունը պատմում է Շահանդուխտի ձեռքով գրված նամակի մասին. «Ես՝ Քրիստոսի մեղավոր աղախին Շահանդուխտս, Թորգոմյան տուն հարս էի գնում: Հասա Բաղքի սահմանը՝ այն քարաժայռի գլուխը, որտեղով ճանապարհն է անցնում: Ահա այստեղ հանկարծ հանդիպեցին իսմայելցիները, որոնք հռչակված գեղեցկությանս պատճառով կամենում էին ինձ հափշտակել: Նրանք սրերը քաշած կոտորեցին մեր հեծելագունդը: Ես ճիշտ համարեցի մեռնել հանուն Քրիստոսի: Հիշելով Սուրբ Հռիփսիմեին՝ խաչակնքեցի ու ձիուս հետ թռա քարաժայռից: Քամու ուժգին հոսանքով ու աներևույթ զորությամբ, կարծես թե, կառքով իջա ձորի խորխորատը, ձին էլ հետս՝ անվնաս: Այնտեղ դադար առնելով՝ անձս նվիրեցի Քրիստոսին: Ուխտեցի այլևս երբևէ այստեղից դուրս չգալ: Շինեցի մի մատուռ, որտեղ ճգնեցի, ապաշխարեցի ամբողջ կյանքիս ընթացքում: Թեև ծնողներս և Թորգոմյան իշխանները շատ թախանձեցին վերադառնալ աշխարհիկ կյանք, բայց ես անդրդվելի էի: Կանչեցի Սյունյաց եպիսկոպոսին, ամբողջ ունեցվածքս տվեցի նրան՝ կեսը բաժանելու կարիքավորներին, մյուս կեսը՝ նվիրելու սուրբ եկեղեցուն»:
Այս ավանդույթի համաձայն ձորն անվանվել է Հարսնաձոր:

5 Հարժիս

Հին գյուղ է Հարժիսը: 839թ. Հարժիսը հիշվում է Սյունյաց եպիսկոպոս Դավթի կալվածագրում՝ իբրև Տաթևի վանքին հարկատու գյուղ: Գյուղը արևելքից, հյուսիսից և արևմուտքից շրջապատված է հրաբխային բլուրներով, որոնցից հայտնի են՝ Հալիձորի թափա (բլուր), Մեծ թափա, Կայծակի հարվածած (կայծակ թխած), Շինուհայրի թափա, Քար թափա, Չոբան թափա, Շիշ թափա, Խութիսի թափա: Հարավից Որոտանի ձորն իջնող անանցանելի ուղղաձիգ ժայռն է: Գյուղից Որոտանի ձորը տանող միակ ճանապարհը ժայռի արևմտյան եզրով իջնող, հիմնականում ոտքով անցանելի ուղին է:

Նախկինում առևտրի մի ճանապարհն էլ անցել է Հարժիսի մոտով, որտեղով քարավաններ էին անցնում: Այդ ճանապարհը պահպանված է Աղի անվամբ (գյուղացիներն ասում են, որ առևտրականները հիմնականում աղ էին տեղափոխում Հարժիսի ճանապարհով): Նշանավոր Աղի ճանապարհով անցնողների համար կառուցվել է քարվանատուն, որ հիմա հայտնի է Կոտրած քարվանսարա անունով:

Հարժիսից արևելք գտնվող ձորի ձախ կողմում հետագայում բնակություն են հաստատել այլադավ ցեղեր, որոնք գարնան և ամռան ամիսներին իրենց ոչխարի հոտերով գալիս էին այդտեղ՝ սարահարթի առատ բուսականությունից օգտվելու, իսկ ձմռանն իջնում էին Որոտան ձորը: Սարահարթում նրանց ապրելու տարածքը կոչվում է Վերին Քիրդեր, իսկ Որոտանի կիրճում՝ Ներքին Քիրդեր: Ասում են, որ «Քիրդեր» բառը կապ չունի «քուրդ» ցեղանվան հետ: Այս ձորով հոսող Որոտան գետի վրա գցված կամուրջն անվանում են Քրդիկի կամուրջ, որը կառուցել է Սյունյաց Քուրդ իշխանը 8-րդ դարում: Կամրջից քիչ հեռու Ալան թագավորի պալատի ավերակներն են, որտեղ կիսավեր եկեղեցի կա, մեջը՝ տապանաքար՝ այսպիսի գրությամբ. «Գեղեցկատիպ և ծաղկափթիթ Ալան....,1324»: Վերին Քիրդերում ապրող ցեղերն աչք ունեին Հարժիսի վրա, բայց վախենում էին նրա քաջ գյուղապետից: Մի օր երեկոյան նրան հրավիրում են հյուրասիրության, հարբեցնում և քնեցնում են իրենց մոտ: Առավոտյան գյուղապետը դուրս է գալիս տնից, նայում Հարժիսի կողմը և տեսնում հրդեհված գյուղը: Գյուղապետը տեղում մահանում է սրտի կաթվածից:

Գյուղից փրկվում է միայն մի աղջիկ, որը հետագայում բնակություն է հաստատում այնտեղ:

Մաղանջուղը եղել է տարածաշրջանի ամենամեծ գյուղերից մեկը: Այն հիշատակվում է 17-րդ դարից սկսած՝ նախ որպես գավառ Մյուս Բաղքում, ապա որպես գյուղ Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուր գավառում: Այն կհետաքրքրի զբոսաշրջիկներին, քանի որ հին գյուղատեղում և ամբողջ շրջակայքում դեռևս պահպանված եկեղեցիները, սրբավայրերը, աղբյուրները, խաչքարերը, բնական հուշարձանները և հովասուն բնությունը դիտարժան են:

Ղ.Ալիշանը գրում է. «Մեկ մղոնով կամ դրանից պակաս Զագեձորի վերջից Բարկուշատն ընդունում է մի այլ փոքրիկ վտակ, որի ձորաբերանում Մաղանջուկ փոքր գյուղն է՝ Ս.Հռիփսիմեի եկեղեցով, Քարահունջի հարավի և Տավութլուի հյուսիսի միջև:

6 Հարթաշեն

Մաղանջուղ՝ «քարայրների երկիր»

Աշխարհագրական դիրքով Մաղանջուղի տարածքը բավականին նպաստավոր է եղել: Ծովի մակարդակից մոտ 800 մ բարձրությամբ՝ շրջապատված անտառ-թփուտներով: Գյուղն այգիներ ունեցել է ոչ միայն շրջակա տարածքում, այլև Որոտան և Վարարակն գետերի միացման հովտում:
Ս. Լիսիցյանը նշում է, որ Կյորի, Ալիղուլի, Քարաշեն, Մաղանջուղ գյուղի բնակիչները եկել են Պարսկաստանից:
Մաղանջուղը բանավոր, վիմագրական և մատենագիտական աղբյուրներում ունեցել է տարբեր անուններ՝ Մաղանջ, Մաղանջուխ, Մաղանջուկ, Մաղանճու, Մահանջու, Մաղարաջուղ, Մաղարաջուխ, Մաղարաջուկ: Ս. Խանզադյանը նշում է, որ այն առաջացել է Մուղանի ճյուղ բառից:
Հետաքրքրականն այն է, որ գյուղի անվան մեջ պահպանվում են գյուղացիների պատկերած առասպելակերպ պատմությունները: Արաբերեն մաղարա (maǧara) «քարանձավ, քարայր» բառն անցել է հայերենին, թուրքերենին և պարսկերենին: Կարելի է ասել, որ նախապես եղել է մաղարաչուտ «քարանձավաշատ վայր, քարայրոտ», որ հետագայում լեզվական տարբեր ազդեցություններից դարձել է Մաղանջուղ. մաղարա (مغارة) «քարայր» արմատին կցվել է չուտ ածանց, որ ունի «ինչ-որ բանով հարուստ, առատ տեղ, վայր» նշանակությունը: Հավանաբար մաղարա բառում կրճատվել է -րա վերջնամասը փոխազդեցական հնչյունափոխությամբ, իսկ -չուտ ածանցն օտար հնչողությամբ դարձել է ջուղ: Հնարավոր է նաև, որ այն ոչ թե ածանցի՝ օտար հնչողությամբ դարձված է, այլ ջուղ արմատն է, որ հանդիպում է Սյունիքում՝ Կապուտջուղ, Կալաջուղ (հին գյուղ Սիսիանում), այլև՝ Ձուղա: Պարսկերենում և արաբերենում առկա է ڎڋ /cuǧ/ջուղե/ «խոռոչավոր, սնամեջ, գոգավոր» համանունը, որ նույնպես կարող է լինել մաղարա բառին կից, սակայն նկատում ենք, որ ոչ միայն մաղարա, այլև կապուտ, կալա բառերին իմաստով համադրվում է «խումբ» նշանակությամբ բառը, որից էլ հնարավոր է առաջացած լինի «քարայրների խումբ» անվանումը, այսինքն՝ Մաղանջուղ նշանակել է «քարայրների երկիր»:

7 Քարահունջ

Օրորոցաքարի լեգենդը

Քարահունջ գյուղը հյուսիսից եզերվում է բազալտե վիթխարի ժայռապարսպով: Մի քանի տասնյակ մետր բարձրությամբ քարափից թափվող փոքրիկ մի ջրվեժ՝ ծիածանվելով թագ է կապում գյուղի գլխին: Ահռելի առապարը, դեպի հիմքը կորանալով, վերածվում է հսկայական ժայռածածկի:

Կոլեկտիվ տնտեսավարման տարիներին գյուղացիներն այստեղ կուտակում էին խոտի հազարավոր հակեր, որոնց մնացորդները մինչ այժմ էլ մնում են: Հնուց մարդն ապրել է այստեղ՝ անմատչելի բնական այս պնդոցում: Ապացույցը քիչ ներքևում թիկնած Օրորոցաքարն է՝ բազալտե հսկայական ժայռաբեկորը, որի հարավահայաց թեք ճակատին բազում ժայռապատկերներ կան ու չվերծանված գրեր:

Այժմ էլ պատմում են, թե ինչպես աշխարհակործան պարսից Շահ Աբաս արքայի մեծ բռնագաղթի ժամանակ, երբ հազարավոր հայեր քշվեցին Պարսկաստանի խորքերը, երկու եղբայրներ, խուսափելով գաղթից, հայտնվեցին Քարահունջում: Շատ զրկանքներ կրած, տուն ու տեղ, կին ու զավակ կորցրած տառապյալ եղբայրները նախ ապաստանեցին գյուղի ներքին քարատակներում: Հետո նոր ընտանիք կազմեցին, շատ զավակներ ունեցան ու գյուղի ծայրին՝ մեծ քարափի տակ, խրճիթ կառուցեցին:

Մի օր սարսափազդու դղրդոցով ժայռակողից պոկված մեծ քարաբեկորը գլորվեց ու ընկավ յոթ օրորոցով խրճիթի վրա: Այդ օրվանից մեծ քարը կոչվեց Յոթնօրորոցաքար:

8 Խնձորեսկ

13-րդ դարի ծաղկող Մարտիրոսը վկայություն է տալիս, որ 10-րդ դարից արդեն կա Խնձորեք գյուղը: Ըստ ասացողների և ուսումնասիրողների՝ բառն առաջացել է խնձոր բառից, քանի որ հնում այս ձորակը լիքն է եղել խնձորենիներով: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ Խնձորեսկ բառն առաջացել է «խոր ձոր» բառից՝ խոր ձորեսկ: Այլ կարծիքի համաձայն՝ Խնձորեսկը կենտրոնական դիրք է ունեցել, պաշտպանական առումով գերակայություն է ունեցել տարածքում, և որպես կենտրոն, ինչպես աչքի խնձորը՝ աչքի կենտրոնը, ստացել է այդ անվանումը:

Խնձորեսկ

Իսկ գյուղացիները նշում են, որ պարսկերենից է՝ խեն զեն, որ նշանակել է «խոզերի բուն», իբր խոր ձորերում խոզեր են ապրել:
Ասում են, որ շատ հնում Սյունիքը որսատեղի է եղել Պարսկաստանի համար, իսկ Խնձորեսկի ձորը լիքն է եղել վարազներով. նույնիսկ Սյունյաց իշխանական տներն ունեցել են վարազի կերպարով զինանշան: Վարազներին քշում էին Խնձորեսկի ձորերը ու որսում, այդտեղից էլ իբր առաջացել է «խոզաձուր» Խնձորեսկ անունը: Կա նաև այն կարծիքը, որ առաջացել է խանձված բառից:
Խնձորեսկը հայտնի է եղել իր աղբյուրներով: Դրանցից առավել հայտնի է Ինի մանուկը:
Մյուս աղբյուրն Ակնաղբյուրն է գյուղի կենտրոնական մասում: Աղբյուրը նախապես վերևում ունեցել է ղաբ՝ քարայր, որը փլվել է, բայց երբ վերակառուցել, դրել են տանիք, ու այսպես հետքերը վերացել են: Աղբյուրի ջուրը կավի փողրակներով չորս կիլոմետր հեռավորությունից բերել են գյուղ:
Ղանդունց նովը հիմնել են Ղանդունց ազգի մարդիկ:
Կլազի նովը կառուցել է Կլազ անունով մեկը: Երբ կառուցել են Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, անհրաժեշտ է եղել, որ հոգևորականների համար ջուր լինի եկեղեցու ճանապարհին: Ու այդ աղբյուրը կառուցել են ուխտավոր-հավատացյալ մարդկանց համար:
Թելունց աղբյուրը կառուցել են Թելունց կալում: Այն վերակառուցվել է Աշոտ Թելունցի կողմից: Այս վայրը հանգստյան տեղ է իսկական, աղբյուրի ջուրն ու տարածքը շատ դուրեկան են: Բացի այդ՝ Թելունց աղբյուրի շրջակայքում հին բնակատեղի կա, պահպանվել են յուրահատուկ քանդակներով խաչքարեր, տաճարի սյուներ:
Բադուն նովը նույնպես հայտնի է եղել, որից ջուր են խմել մարդիկ և անասունները:
Խնձորեսկում եղել է 35 աղբյուր, որ գործել են գյուղի ներսում: Գյուղը 14 թաղամաս է ունեցել՝ աջ ու ձախ կողմերում: Գյուղը բաժանվել է պատնեշներով, որոնք կոչվել են թաղեր՝ ձորի երկարությամբ: Համարյա բոլոր թաղերում աղբյուրներ են եղել: Խնձորեսկի աղբյուրների մասին բազմաթիվ երգեր կան:

9

Խնդիր

Գյուղի հետ կապված և՛ ավանդություններ, և՛ պատմական տեղեկություններ շատ կան: Այն գոյություն ունի հնագույն ժամանակներից: Մ.թ. IV դարից հիշատակվում է որպես ավան: Սյունյաց Անդոկ իշխանի որդի Բաբիկն էր պահում-պահպանում Խոտ գյուղը, որը նրան էր վերադարձրել Սյունիքն ասպատակած Շապուհ արքան: Բաբիկ իշխանն իրեն ուղեկցող պարսիկ Գոր և Գուշան եղբայրներից Գորին է բաժին հանում Խոտ ավանը, որը եղել է Սյունիքի բարեկարգ և գեղեցիկ բնակավայրերից մեկը:
Գյուղը, ըստ ավանդության, տեղափոխվել է մի քանի անգամ: Նախապես եղել է Գիժ կամ Գույժ կոչվող քարափին, տեղացիների ասելով՝ Մատաղախաչ քարափից քիչ վերև, Բռչնեկի մեծ ծառի հարևանությամբ գտնվող սրբատեղի անունով: Նշում են, որ այստեղից էլ առաջացել է գյուղի անվանումը՝ Կիժ (բլրակ), այստեղից էլ՝ Խութ-Խոտ անվանումը:
Մեկ այլ կարծիքի համաձայն՝ գյուղն ավերել է Լենկթեմուրը՝ Տաթևի արշավանքի ժամանակ: Բնաջնջումից փրկվել է միայն մեկ անձ՝ թաքնվելով անմատչելի քարանձավում: Նա քառասուն ցորենի հատիկով սնվել է քառասուն օր, ապա՝ խոտերով, որտեղից էլ ծագել է Խոտ անունը:
Ըստ Ս. Օրբելյանի՝ Խոտը Սյունիքի Հաբանդ գավառի գյուղերից է, որ Տաթևի վանքին 12 միավոր հարկ է տվել: Գյուղը տեղացի տարբեր իշխանների հսկողության տակ է եղել կտակով ու առանց դրա, ապա նվիրաբերվել Տաթևի վանքին:
Խոտ գյուղը հնուց մինչ հիմա ունի բազում տեղանուններ, որոնք ուշագրավ են թե՛ պատմական, թե՛ ճանաչողական, թե՛ ավանդական-ժամանակակից տեսանկյուններից: Զորամիջի Խոտն ունեցել է յուրահատուկ կառուցվածք. մեկի կտուրը եղել է մյուսի բակը: Ասում են, որ այդ օրինակով է կառուցված այսօրվա Գորիսի «Ծտի բներ» թաղամասը: Հին գյուղն ունի բազմաթիվ քարանձավներ, որոնցում դեռևս պահպանված են օջախի, ճրագկալի, ամանեղեն պահելու տեղերը: Հետո կառուցվել են կամարակապ տներ, որոնք յուրահատուկ տեսք են տվել բնակավայրին:

10. Ներքին Խնձորեսկ

Հնարամիտ խնձորեսկցիները Թուրքմենստանում

Ներքին Խնձորեսկ գյուղից երկու եղբայր աշխատում էին Թուրքմենստանի մի քաղաքում: Մեծ եղբայրը վարում էր ներքաղաքային ավտոբուս, իսկ փոքրը՝ ուղևորներին տոմսեր էր վաճառում: Ասում են, որ նրանք շատ հնարամիտ են լինում մյուս բոլոր խնձորեսկցիների նման, ովքեր աշխատում են հայրենիքից դուրս: Փոքր եղբայրն ավտոբուսի տոմսը վաճառելուց և գումարը վվերցնելուց հետո հաճախորդներից յուրաքանչյուրի մեջքին կավիճով խաչ էր անում, որպեսզի տարբերակի վճարածներին չվճարածներից: Պատմում են, որ ժամանակի ընթացքում օրինապահ մարդիկ իրենք էին վճարելուց հետո մեջքները շրջում, որպեսզի տոմսավաճառը խաչ դնի: Այդ ժամանակից Թուրքմենստանի այդ քաղաքում այլևս ավտոբուսի տոմսի համար չվճարող հաճախորդներ չեն լինում:

11 Շինուհայր

Կույս Հռիփսիմեի լեգենդը

Այժմ էլ հին Շինուհայրի արևմտյան փեշին՝ անդնդախոր ձորապռնկին, կիսականգուն է Կուսանաց անապատը: Հինգ-վեց մետր բարձրությամբ պարսպով շրջապատված մենաստանը կառուցվել է 17-րդ դարի 70-ական թվականներին և մեծ դեր է խաղացել Սյունիքի հոգևոր-մշակութային կյանքում: Նրա տեղադրությունը բնակավայրի ներսում պատահական չէ: Սովորաբար մենաստանները կառուցվում էին մեկուսի վայրերում: Պատճառն այն էր, որ աշխարհիկ կյանքը չպետք է ներխուժեր Աստծու նվիրյալների կենցաղ: Այս մենաստանն իր տեսակի մեջ եզակի էր: Այն, ըստ էության, իգական դպրոց էր և կոչվում էր կուսատուն: Ըստ հավաստի աղբյուրների՝ այստեղ սովորում էր 80-150 աղջիկ: Ցայժմ էլ պատմում են չքնաղագեղ Հռիփսիմե կույսի առեղծվածային անհետացման մասին: Խստաբարո դպիրները նկատում են, որ սանուհիներից մեկը հաճախ անհետանում է ու կրկին հայտնվում: Հետևում են ու պարզում, թե ինչպես քարայծի ճարպկությամբ աղջիկն իջնում է ժայռից, մացառների միջով հասնում ամեհի ձորը, ուր պայմանավորված վայրում հայտնվում սիրելիի գրկում: Վերացած գորշ իրականությունից՝ տրվում է սիրո, անսահման ազատության ու բնության վայելքներին, իսկ երեկոյան՝ աղջամուղջին, կրկին ծածուկ հայտնվում է կուսատանը: Բացահայտված «մեղավորը» ենթարկվում է գանահարության, համարվում է անառակ, պիղծ ու արհամարհանքի արժանի: Օրեր անց Հռիփսիմեն կրկին անհետանում է, այս անգամ՝ ընդմիշտ: Թե ո՞ւր կորավ նա, բոլորին մնում է անհայտ: Խորտակե՞ց իր նվաստացված անձը, թե՞ գնաց վայելելու արարչածին աշխարհի երկրային բարիքները: Հայտնի մնաց միայն այս պատմությունը, որ մարդիկ պատմում են իրար սերնդեսերունդ:

Սվարանց գյուղը նույնքան հին է, որքան Տաթևը: Նրա մերձակա տարածքում՝ սկսած Զանգեզուրի լեռնաշղթայի լեռնաբազուկ Բարգուշատի՝ Արամազդ կատարի բարձունքներից մինչև Տաթև գյուղի մերձակա փեշերը կան բազմաթիվ հնավանդ հուշարձաններ: Դրանց մեջ առանձնանում է հատկապես մի հուշաքար, որի վրա պատկերված է ստնտու գայլը երեխայի հետ:

12 Սվարանց

Յայջիկ-Մաուգլու լեգենդը

Սվարանցի 83-ամյա բնակիչ, նախկին ուսուցիչ Գառնիկ Արշակյանը պատմում է, որ մանկուց լսել է բազմաթիվ պատմություններ տեղական «մաուգլիների» մասին:

-Մի Մաուգլի էլ Հարժիսից է եղել, արջն է պահել,- պատմում է նա: -Վաղ աշնանային մի օր՝ գյուղական աշխատանքների թեժ պահին՝ հնձի ժամանակ, մի գյուղացի ծառից ճոճք էր կախել, երեխային դրել մեջը: Մեր կողմերում արջերը շա՛տ-շա՛տ էին, մինչ այժմ էլ կան, թեև՝ հատուկենտ: Մեկի քոթոթներին հովազն ուտում է, արջը մնում է առանց ձագերի՝ կուրծքը կաթով լիքը: Տեսնելով ուշադրությունից դուրս մնացած փոքրիկին՝ աննկատ մոտենում ու կուրծքը հպում է մանկան շուրթերին: Սոված երեխան ագահաբար ծծում է առատ կաթն ու հանգստություն պարգևում կենդանուն: Այնուհետև վերցնում է մանկանն ու անհետանում անտառի թավուտներում:

Անցնում է ինը տարի: Երկու որսորդ մի քարայրի շրջակայքում մոտ տարածությունից կրակում են արջի վրա ու սպանում: Հանկարծ անձավի միջից դուրս է պրծնում գզգզված մազերով մի էակ ու ցատկում-հարձակվում որսորդներից մեկի վրա: Բռնում են վայրենացած մանուկին ու բերում գյուղ: Արագորեն լուրը տարածվում է: Լսելով արտասովոր լուրը՝ Յայջի (այժմ՝ Հարժիս) գյուղից մի կին գալիս է և պարզում, որ վայրենին ինը տարի առաջ կորցրած իր աղջիկն է: Միայն նրան է հաջողվում հանգստացնել փոքրիկ գազանիկին, ով երբեք էլ մարդկային լեզու չի սովորում: Անունը Յայջիկ է եղել: Այդ անունից էլ առաջացել է Յայջի գյուղանունը:

13

Swpłu

Սատանի կամուրջը

Սատանի կամուրջը բնական կամուրջ է Որոտանի վրա: Գոյացել է շրջակայքի հանքային աղբյուրների կրաքարային նստվածքներից՝ տրավերտիններից: Շրջակայքում և կամրջի տակ կան շթաքարեր ու պտկաքարեր:

Սատանի կամրջի անվան հետ կապված տարբեր վարկածներ կան: Ոմանք ասում են, որ անունը կապված է կամրջի տակ՝ ջրում խեղդվելու բազմաթիվ դեպքերի հետ: Ուրիշները կարծում են, որ ավելի քիչ ջուր է մտնում կամրջի տակ, քան դուրս է գալիս, և դա սատանայի գործն է: Սակայն դա պայմանավորված է նրանով, որ վերևից հանքային ջրեր են կաթկթում և քարերի միջով հասնում ներքև: Սատանի կամրջի տակ գտնվող բուժիչ հատկություններով օժտված տաք հանքային ջրերը գոյացրել են ջրավազաններ: Հայտնի է, որ դեռ հնագույն ժամանակներում հայ մեծահարուստներն անպայման ամռան ամիսներին այցելում էին այս հրաշագեղ քարանձավը՝ բուժիչ լոգանք ընդունելու:

Տեղի բնակիչները, վաղ ժամանակներում չկարողանալով բացատրել երկրաբանական այդ գործընթացները, այն համարել են սատանայի գործ, իսկ կամուրջը՝ «Սատանայի կամուրջ»:

14 Վերիշեն

Պղնձի ժայռը

Վերիշեն գյուղի արևելյան լանջին է գտնվում Պղնձի ժայռը, որ ոչ միայն գեղեցիկ է իր դիրքով ու բարձրությամբ, այլև յուրահատուկ իր գույնով՝ պղնձագույն: Ըստ ավանդության՝ ժայռն իր այդ գույնը ստացել է իր ներսում կուտակված ոսկյա, արծաթյա, բրոնզյա և պղնձյա զարդերից ու զանազան իրերից: Պատմում են, որ շատ հնում, երբ թշնամիները հարձակվել են այս ձորակի բնակավայրերի վրա, մարդիկ հավաքվել են Պղնձի ժայռի շուրջ, մեծ հոր փորել ու իրենց ունեցած-չունեցած թանկարժեք իրերը պահել այդ հորում: Դարերի ընթացքում այդ թանկարժեք մետաղներից ժայռը գույն է ստացել ու կոչվել՝ Պղնձի ժայռ: Պատմում են նաև, որ բնակիչները Պղնձի ժայռի տակ փորված հորից բացի մի թունել էլ են փորել: Ամեն անգամ, երբ թշնամիները հարձակվել են, մարդիկ այդ թունելն են մտել ու դուրս եկել Ծտի բեր կոչվող թաղամասից, պատսպարվել Ծակերի ձորի լեռան մեջ փորված անձավներում: Թունելն ունեցել է երկու ճանապարհ: Մյուս ելքն էլ եղել է դեպի Սինդարա ձորը, որտեղից էլ մարդիկ փախել են դեպի Բայանդուր: Հետագայում այդ թունելը փակվել է, և ոչ ոք չի հիշել դրա մասին, բայց այսօր էլ, ասում են, որ հետքերը կան: Ըստ ավանդության՝ Պղնձի ժայռը եղել է բերդ, որը անմատչելի է եղել, այդ պատճառով էլ անվանել են պղնձի ծայռ՝ իր ամրության համար:

15 Որոտան

Որոտան գյուղը

Ավանդազրույց կա, որ շատ հնում այստեղ հայկական գեղեցիկ գյուղ է եղել, որի շրջակա ժայռերում և անտառամերձ վայրերում տարբեր տեսակի օձեր կային: Մարդիկ պատեհ-անպատեհ առիթներով սպանում էին իրենց հանդիպած օձերին: Տեսնելով, որ ոչ մի կերպ չեն կարողանում ազատվել մարդկանց բռնությունից, միևնույն ժամանակ չէին ցանկանում լքել այդ տաք տեղանքը, այդ ամենի մասին գնում և պատմում են թագուհի օձին: Սա թևավոր մի հսկա և գեղեցիկ օձ է լինում՝ հազար գույնով ու փայլփլուն: Կանչում է Արաքսի և Կուրի բոլոր օձերին ու հարձակվում են այս ձորի մարդկանց վրա: Մարդիկ ստիպված թողնում են ձորակը և բնակություն հաստատում բարձրադիր վայրերում: Այնքան ժամանակ են օձերն այստեղ տիրապետող լինում, մինչև երկնքից կրակ է թափվում, և նրանց մեծ մասը սատկում կամ թողնում ու հեռանում է: Երկար ժամանակ ձորում ո՛չ օձերն էին ապրում, ո՛չ մարդիկ, մինչև որ համատեղ ապրելու հնար են գտնում: Այդ օրվանից Որոտանում օձերն ու մարդիկ ապրում են հաշտ ու խաղաղ և իրար չեն վնասում: Այս ավանդազրույցը պատմում են խոտեցիները, որոնց հին բնակավայրը եղել է Որոտանի հանդիպակաց լեռան փեշին:

16 Աղվանի

Հարսնաձոր

Աղվանի գյուղի տեսարժան վայրերից է Հարսնաձորը, որը համարվում է տեղաբնիկների հանգստյան գոտիներից մեկը: Հարսնաձորի հետ կապված կա մի հետաքրքիր զրույց-հիշողություն: Շատ հաճախ տեղի գյուղերի հայ բնակչության հարևան օտարները հարձակվել են հայկական բնակավայրերի վրա հատկապես որոշ ազգային տոների ընթացքում ու միջոցառումների օրերին՝ մտածելով, որ այդ ժամանակ հայերն անպաշտպան են ու անպատրաստ են դիմագրավելու հարձակմանը: Ըստ ավանդության՝ հայկական հարսանիք է լինում, ու հարձակվող թշնամիներն ուզում էին գերեվարել հարսին: Բայց հարսը, նախընտրելով մահը, ցատկում է ժայռից: Սակայն Աստծու կամքով հրաշք է տեղի ունենում. օդը, լցվելով հարսանեկան զգեստի մեջ, հարսին փափուկ ու անվնաս հասցնում է գետնին: Այդ դեպքից հետո տեղանքը կոչվում է Հարսնաձոր:

Աղվանին ծառերի ու ալպիական մարգագետինների մեջ է ընդգրկված ու շատ հարմար է վրանային հանգստի համար:

17 Անտառաշատ

Տափասար

Տափասարը լեռնային հարթություն է՝ 2000 մետրից ավել բարձրության վրա, որը, ըստ ուսումնասիրությունների ու նաև ըստ տեղաբնիկների պատմությունների, քարերի վրա կրում է ծովային կենդանիների հետքեր: Համաձայն ավանդության՝ տեղում եղել է ծով, որը հետ է քաշվել՝ բացելով մեզ համար հրաշալի մի տեսարան՝ քարայրներով, ալպիական մարգագետիններով, էնդեմիկ բուսատեսակներով ու, որ ամենակարևորն է, քարերի վրա արտատպված ծովային կենդանիների հետքերով: Սարի վրա գտնվում է 17-րդ դարի մի անարվեստ խաչքար, որին հավանաբար ուխտի են գնացել տեղաբնակները, ու որի մոտ շարունակում են մոմ վառել սարերում իրենց հոտն արածեցնող հովիվներն ու անտառաշատցիները:

Քամու եկեղեցի

Անտառաշատի դիմացի բլրին է գտնվում Քամու եկեղեցի կոչվող հուշարձանը: Այդ հուշարձանի հետ կապված կա մի հետաքրքիր հավատալիք: Ըստ էության՝ Քամու եկեղեցին անցքերով մի պորտաքար է, որի միջով արձագանքելով՝ սուրում է քամին, ուստի պատահական չէ, որ տեղացիներն այն անվանում են «Քամու» եկեղեցի: Ասում են, որ նախ՝ այդ պորտաքարին պորտով հպվող անզավակը զավակ է ունենում, և ապա՝ ով այդ անցքով անցնում է, ուրեմն արդար մարդ է և երկար է ապրում, իսկ ով որ չի կարողանում անցնել, անարդար է ու կարճ կյանք ունի:

Կապանի տարածքում գոյություն ունի երկու Աղջկա բերդ: Մեկը Ծավ գյուղի դիմաց՝ գետի աջ ափին, մյուսը Առաջաձորի և Շղարշիկի միջև է: Երկու լեգենդներն էլ խոսում են կնոջ անձնազոհության մասին:

Լեգենդը պատմում է, որ մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ առաջաձորցիները և Աճանանի բնակիչները պաշտպանվում էին Աղջկա բերդում: Նրանց գլխավորում էր Սյունյաց Սահակ իշխանը: Ասում են, որ Սահակն ունեցել է Անուշ անունով մի գեղեցկուհի աղջիկ:

18 Առաջաձոր

Աղջկա բերդի լեգենդը

Անուշի գեղեցկության համբավը հասել էր մոնղոլ խանին: Խանը ցանկանում էր տիրանալ Անուշին, բայց Անուշը պաշտպանվում է բերդի անառիկ պարիսպների ներսում: Պաշտպանները քարկոծում ու նետահարում էին մոնղոլներին: Այդ ժամանակ խանը դիմում է խորամանկության. նա պատգամավոր է ուղարկում Սահակ իշխանի մոտ ու խնդրում Անուշի ձեռքը՝ դրա դիմաց խոստանալով ոչ միայն հեռանալ ամրոցից, այլև ընդհանրապես չանհանգստացնել հայերին: Հակառակ դեպքում խանը սպառնում էր գրավել բերդը և սրի քաշել բոլորին: Սահակ իշխանը հայտնվում է անելանելի դրության մեջ: Հացի պաշարը սպառվում էր, մարդիկ մեռնում էին սովից: Այնուամենայնիվ նա մերժում է առաջարկը՝ հույսը դնելով Աստծո հրաշքի վրա՝ նախընտրելով կռիվն ու պայքարը: Ինքը՝ Անուշն էլ կռվում էր բերդի պաշտպանների շարքում: Բայց սովն ամենազոր էր. մարդիկ ավելի շատ մեռնում էին ոչ թե կռվի մեջ, այլ սովից:

«Եվ այս բոլորի մահվան պատճառը ես եմ»,- մտածում է աղջիկը: Ու մի օր՝ լուսաբացին, նա բարձրանում է ժայռի գագաթը ու բոլորի աչքի առջև իրեն ցած նետում: Դա տեսնում է նաև թշնամին, լուրը հասնում է խանին, և նա հրամայում է գտնել աղջկա մարմինը: Մոնղոլ զինվորները փնտրում, սակայն չեն գտնում Անուշի մարմինը: Հիասթափված երկարատև պաշարումից և Անուշին կորցնելուց՝ խանը թողնում է պաշարումն ու հեռանում Աճանանից:

Բայց մայր երկրի սաղարթախիտ անտառը, որ տարածված է ժայռից ներքև, իր սաղարթներում աղջկան պահել էր անվնաս: Լեգենդն ասում է, որ հենց այդ օրվանից բերդը կոչվեց Աղջկա բերդ: Այդ ժամանակից շրջակայքում նոր ծնված բազմաթիվ աղջիկների կնքեցին Անուշ անունով:

19 Բաղաբերդ

Բաղաբերդ ամրոցը Մեծ Հայքի Սյունիք նահանգի անառիկ ամրոցներից էր, որը 4-րդ դարից սկսած եղել է ռազմական կարևոր հենակետ: Այն գտնվում է Կապան-Քաջարան մայրուղուն հաղորդակից Անդոկավան, Դավիթ Բեկ և Ներքին Գիրաթաղ բնակավայրերի հարևանությամբ:

Բաղաբերդի հյուսիսով անցնում է երկու ճանապարհ. դրանցից մեկը գալիս է Բարկուշատի ու Աճենի կողմից ու ձգվում դեպի Արևիք ու Գողթն, մյուսը սկիզբ է առնում հենց Բաղաբերդից ու ձգվում է դեպի Տաթև:

Բաղաբերդ ամրոց

Եթե մինչև Սյունիքի թագավորությունը բերդը եղել է որպես անառիկ ապաստան, ապա թագավորության շրջանում բերդը դառնում է գահանիստ կենտրոն: Պատմական Կապան մայրաքաղաքի կործանումից հետո այստեղ են կենտրոնացվել և պահպանվել Տաթևի վանքի և թագավորության գանձերն ու մեծաթիվ ձեռագիր մատյաններ: Կապան մայրաքաղաքի գրավումից 67 տարի հետո միայն թշնամուն հաջողվում է խաբեությամբ գրավել Բաղաբերդը: Բերդին կարելի էր մոտենալ միայն հարավ-արևմուտքից, որտեղ էլ տեղադրված էր միակ մուտքը: Մուտքի հյուսիսային հատվածում տեղադրված էր ամենամեծ բուրգը և օգտագործվել է որպես մուտքը պաշտպանող հսկիչ աշտարակ: Մուտքը կառուցելիս օգտագործվել են հայկական ամրոցաշինության մեջ լայն տարածում գտած մուտքային փակուղիները: Ամրոցի մուտքային մասի պարսպապատը կառուցված է այնպես, որ թշնամին մուտք գործելիս հայտնվում է դիմացի ուղղաձիգ ժայռազանգվածի առջև, որն էլ նեղացնում է դեպի միջնաբերդ տանող անցուղին և որտեղով կարելի է անցնել մեկ-երկու շարքով: Այս նեղ միջանցքը ևս պաշտպանված էր աշտարակով:

Տեղանքի առանձնահատկությունները հմտորեն օգտագործելու շնորհիվ՝ Բաղաբերդը մնացել է անառիկ: Որպես պաշտպանական կառույց՝ իր դերով և նշանակությամբ ամրոցն ունեցել է երկու կարևոր շրջան. առաջին՝ մինչթագավորական (4-րդ դարի կեսից մինչև 12-րդ դարի սկիզբ): Առաջին շրջանում այն օգտագործվել է որպես հուսալի ապաստան և թաքստավայր: Երկրորդ՝ Սյունիքի թագավորության շրջանում (970-1170թթ.) ամրոցը ստանում է համապետական, ռազմավարական նշանակություն: Երկրորդ շրջանում կարելի է առանձնացնել նաև 1103-1170թթ., երբ Բաղաբերդը եղել է Սյունիքի թագավորության գահանիստ:

Ճարտարապետական տեսակետից Բաղաբերդը հայկական ռազմաշինարվեստի եզակի կառույց է:

20

Բաղաբուրջ

Բաղակի Քար

Բաղակի Քար կամ Բաղակաբար բերդը Սյունիքի նշանավոր բերդերից մեկն է և շատ է հիշատակվում պատմագիրների կողմից: Ոմանք նույնիսկ Բաղակի Քարը նույնացնում են Բաղաբերդի հետ, ինչը ճիշտ չէ: Դրանք տարբեր պաշտպանական կառույցներ են, որոնք գտնվում են միմյանցից 700-800 մետր հեռավորության վրա՝ Ողջի գետի հակադիր ափերի բարձր ժայռերի գլուխներին: Սկսած 4-րդ դարից բերդը հիշատակվում է միջնադարյան պատմիչների կողմից: Ըստ էության՝ Բաղակի Քար բերդը համարվել է Բաղաբերդ ամրոցի անառիկ դուռը, առանց որի գրավման հնարավոր չէր մոտենալ մայր ամրոցին: Ավանդությունը պատմում է, որ Բաղաբերդը և Բաղակի Քարը կապված են եղել շղթայով, որով փորի վրայով սողալով՝ հաղորդակցություն է ապահովվել երկու ափերի միջև: Դա այն նշանավոր մազե ճոպանն էր, որ դարերի ընթացքում պահպանվել է սերունդների հիշողության մեջ: Պատմությունից իմանում ենք, որ բերդը բազմիցս ենթարկվել է թշնամիների կողմից հարձակումների, սակայն հերոսաբար դիմադրել է՝ ապահովելով դեպի Բաղաբերդ ամրոց տանող ճանապարհը: Բերդում կար նաև համանուն վանք, ուր կային մեծաթիվ գանձեր ու ձեռագիր մատյաններ: Ավանդությունը պատմում է, որ այդ վանքի բակում է թաղվել մի նշանավոր ռազմիկ, ով ոչ թե տղամարդ, այլ մի երիտասարդ աղջիկ է եղել: Նա նշանավոր նետաձիգ է եղել և գլխավորել է նշանավոր բերդերից մեկի՝ Աղջկաբերդի պաշտպանությունը: Սյունիքի պատմիչները վկայում են, որ թշնամին Բաղակի Քար բերդը գրավել է 1126թ., որից հետո էլ ավարի է մատնել հարստությունը, իսկ ձեռագիր մատյանները ոչնչացրել:

21 Բեխ

Հալիձորի բերդի մասին շատ տեղեկություններ և ավանդություններ են պահպանվել: Բայց ավելի հետաքրքրականն այն է, որ այն նախապես եղել է կուսանաց անապատ և այստեղ ընդօրինակվել են ձեռագրեր: Վկայություններ կան այն մասին, որ այստեղ ապրել և ճգնել են 40 կույս, ինչպես նաև վանահայրեր: Քանի որ բնականից տեղանքը լավ պաշտպանված էր, այդ պատճառով հետագայում՝ Դավիթ Բեկի օրոք, անապատը վերակառուցվում և դառնում է ամրոց: Հայոց պատմության մեջ քիչ են նման դեպքերը, երբ հոգևոր արժեք ունեցող կառույցները վերափոխվում են ռազմական դիրքերի: Դրանից հետո Հալիձորի ճարտարապետական համալիրն ուրույն տեսք է ստանում. քառանկյան բերդ, որի կենտրոնում ամրանում են միջնաբերդն ու եկեղեցին:

Հալիձորի բերդը

Բերդը պարսպապատ է, իսկ արևելյան կողմից այն անառիկ է շնորհիվ անհաղթահարելի զառիթափի, որն իջնում է դեպի Ողջի գետը: Ամրոցի պատերը հաստ են, շարված են անկանոն քարերով: Ամրոցի տարածքումկան մեկից ավելի կլոր պաշտպանական աշտարակների ավերակներ: Ամրոցի ներսի շինությունները երկհարկ են և կառուցված են այնպես, որ կազմում են մեկ ամբողջական պաշտպանական համակարգ: Հալիձորի պարիսպների մի մասը կիսավեր վիճակում է, մյուս մասը վերականգնված է: Ամրոցն ունեցել է գաղտնուղի, որը, ավանդության համաձայն, տանում է դեպի Ողջի գետի ափը: Գաղտնուղին հայտնաբերվել է ամրոցի վերականգնման ժամանակ (2007-2009թթ.), հայտնաբերվել են նաև պատմական, հնագիտական, գեղարվեստական նշանակության իրեր, որոնք պատկերացում են տալիս 17-րդ դարի երկրորդ կեսի և 18-րդ դարասկզբի ժամանակների մասին: Ամրոց ջուր է բերվել հեռավոր աղբյուրներից՝ կավե փողրակներով: Մի քանի փողրակ հայտնաբերվել և ցուցադրվում է Կապանի երկրագիտական թանգարանում:

Ամրոցն ունի երկու եկեղեցի: Ստորին մասում գտնվող եկեղեցին հավանաբար կառուցվել է հեթանոսական մեհյանի տեղում, որի մասին վկայում են պատերի մեջ ագուցված նախաքրիստոնեական զարդանախշերով քարերը, քիվերը: Միջնաբերդում է գտնվում Սուրբ Մինաս եկեղեցին, որը կառուցված է սրբատաշ քարերով: Եկեղեցու պատերին ագուցված են խաչքարեր, որոնք տեղադրվել են տարբեր ժամանակներում: Նույնիսկ լուսամուտների վերնամասի քարերի փոխարեն օգտագործված են խաչքարեր: Եկեղեցին ունի երկու դուռ, որոնցից մեկը տանում է սյունասրահ, մյուսը՝ դեպի մերձակա երկհարկանի շինություն: Եկեղեցու ներսում՝ առաստաղի վրա, նշմարվում են որմնանկարների հետքերը: Միջնաբերդն ունեցել է ձիանոց, առանձնասենյակներ, սրահներ, օջախով խոհանոց, դիտակետեր և այլն: Այստեղ ևս շատ են վիմագիր արձանագրությունները և տարբեր ժամանակների խաչքարերը: Միջնաբերդից դուրս պահպանվում է հին գերեզմանատունը՝ տապանաքարերով, որոնց վրա կան վիմագրեր:

22 Զորաստան

Հարսնաքար

Ինչպես Կապանի շատ գյուղեր, այնպես էլ Զորաստանը կառուցվել է անտառին մոտ: Վտանգի ժամին խիտ անտառը թաքցրել, փրկել է գյուղի բնակիչներին: Գյուղը բոլորած սարերն ունեն անուններ՝ Թամքասար, Ծակ քար, Հարաքար, Ճանճաքար, Հարսնաքար: Սրանք ընդհանուր մի պատկեր են ստեղծում իրենց գագաթներով, որ կարծես շուրջպար բռնած լինեն: Գյուղում ասում են, որ անհիշելի ժամանակներում այս լեռներում հարսանիք են արել հսկաները և, չգիտես ինչու, արարչի կամքով քարացել և հավերժացել են հենց շուրջպար բռնած: Սակայն Հարսնաքարի հետ կապված սերունդները պահպանել են մեկ ուրիշ հետաքրքիր և հուզիչ պատմություն:

Ասում են, որ լեռների գրկում՝ գյուղից վեր, անհիշելի ժամանակներում հայաբնակ մի ավան է եղել: Այդ բնակավայրի անվանի ընտանիքներից մեկում մի ամոթխած ու գեղանի նորահարս էր ապրում: Հայ ավանդական օջախներում, երբ աղջիկը հարս էր դառնում, այսինքն՝ ամուսնանում էր, իրավունք չուներ օտարի աչքին գլխաբաց ման գալու: Այդ նորահարսը մի օր գլխաբաց լվացք անելիս է լինում, և հանկարծ տան դուռը բացվում է, և կնքահայրը ներս է մտնում: Նորահարսն ամոթից ճչում է և գլուխը ծածկելու համար լվացքի տաշտն է դնում բաց գլխին ու այդպես ամոթխած, արձան կտրած՝ աղերսում է արարչին.

-Տե՛ր Աստված,- ասում է,- կամ ինձ քա՛ր շինիր կամ էլ անցկացրո՛ւ հողի տակ:

Աստված նրա ձայնը լսում է, խղճում պարկեշտ նորահարսին ու դարձնում քար արձան: Եվ հիմա էլ սարի լանջին կա արձանը՝ «տաշտը գլխին» և կոչվում է Հարսնաքար:

23 Օխտար

Դարերի խորքից այսպիսի մի գեղեցիկ զրույց է մեզ հասել Սյունեի և Սենեքերիմ արքայի սիրո մասին: Միջնադարյան Հայաստանում Սենեքերիմ արքայի հրամանով մահապատժի է ենթարկվում աղանդավոր ընտանիքի հայրը: Վերջինիս աղջիկը՝ Սյունեն, երդվել էր վրեժ լուծել արքայից, և անընդհատ հետապնդում էր նրան: Սյունեն վարժ տիրապետում էր զենքին, հմուտ նետաձիգ էր և հեծյալ: Մի օր, երբ արքան Բաղաբերդ ամրոցից գնում էր դեպի Տանձափարախի վանքը, նրա ձին նետահարվում է, իսկ ինքը վիրավորվում ուսից:

Թիկնազորը հետապնդում է նետաձիգին. պարզվում է, որ նա մի գեղանի աղջիկ էր՝ աղանդավորների ընտանիքից: Սյունիքի այն ժամանակվա եպիսկոպոս Գրիգորը և Շահանդուխտ թագուհին պահանջում են, որ Սյունեն մահապատժի ենթարկվի: Սակայն արքան սիրահարվել էր նրան: Նա բանտախցից ազատում է Սյունեին և նույնիսկ նրան նվիրում Սևադա իշխանից նվեր ստացած սուրը: Սյունեն նույնպես հմայվել էր Սենեքերիմ արքայով, և նրանք չկարողացան գաղտնի պահել իրենց դատապարտելի սերը: Այդ մասին սկսեց խոսել ժողովուրդը, այդ մասին իմացավ նաև Շահանդուխտ թագուհին:

Նրանք գաղտնի հանդիպում էին Ողջագետի ափերի մոտ գտնվող կաղնու պուրակում: Սենեքերիմ արքան դավադիր ձևով սպանվում է թշնամու կողմից: Սյունեն որոշում է սպանել իր սիրելիի՝ արքայի սպանության մեղավորին: Նա երաժիշտի անվան տակ մուտք է գործում թշնամու բանակ, որտեղ թեև կռահում են նրա ով լինելը, այնուամենայնիվ, ազատ են արձակում: Ապա պատմական Շեկք գյուղի և այսօրվա Զորաստանի կես ճանապարհին գտնվող Աղջկաբերդի պաշտպանության ժամանակ Կապանում արդեն հայտնի աղջիկ-զինվորը կրկին գերի է ընկնում և հետո ազատվում: Որոշ ժամանակ անց նա ցանկանում է մտնել վանք և իր կյանքն անցկացնել արքայի շիրիմի մոտ: Սակայն նրան սպանում են սիրելի արքայի շիրիմը գրկելիս:

Որոշ ասացողներ փորձել են ցույց տալ նրա գերեզմանը, բայց դեռևս անհայտ է մնում, թե որտեղ է թաղվել Սյունեն՝ արքայի մոտ, թե՞...

Կապանից Քաջարան տանող ճանապարհին՝ Անդոկավան և Շղարշիկ բնակավայրերից քիչ հեռու՝ մի ժայռաբեկորի վրա, կանգնած է արջի պղնձաձույլ արձանը, որի երախում բանալի է կախված: Արջը Սյունյաց անտառների տիրակալն է համարվել և խորհրդանշել լեռնաշխարհի ուժն ու անառիկությունը: Ասում են, որ արջը փակել է դեպի Գանձասար տանող կիրճը և նրա բերանին է Հայոց աշխարհի անսպառ գանձերի բանալին:

24 Շղարշիկ

Գանձասարի լեգենդն ու արջը՝ որպես գանձերի պահապան

Պատմում են, որ անհիշելի ժամանակներում, երբ հայոց աշխարհում դեռ ապրում էին հսկաների ցեղից մեր նախնի Հայկի որդիներն ու դուստրերը, թշնամիները բազմամարդ բանակներով հավաքվում և ցանկանում են գրավել Հայոց երկիրը: Մեր հսկա նախնիները կռվից առաջ իրենց գանձերը թաքցնելու համար տեղ են փնտրել Հայոց աշխարհում: Փնտրելով հասել են Կապուտջուղ լեռան լանջերին, գտել են ապահով տեղ ու թաքցրել հայոց հարստությունը: Այդ օրվանից այդ վայրը կոչվել է Գանձասար: Ասում են նաև՝ Գանձասարի շուրջ բարձրացած ժայռերը այն հսկաներն են, որոնք իրենց ահարկու տեսքով և ուժով պահապանել են Հայոց աշխարհը: Գանձասարի հետ կապված պահպանվել է մեկ ուրիշ հետաքրքիր պատմություն: Շատ դարեր առաջ հայոց Արտավազդ թագավորը՝ հռոմեական զորքերից իր գանձերը փրկելու համար, հրամայում է դրանք թաքցնել Բաղաց աշխարհի լեռներից մեկի մեջ: Գանձերը պահպանելու համար լեռան վրա կառուցում է մի ամուր բերդ: Սրա պատերի տակ հռոմեական զորքերի և հայ քաջերի միջև տեղի է ունենում արյունահեղ կռիվ: Թշնամիները գրավում են բերդը, ավերում այն, բայց գանձերը չեն կարողանում գտնել: Դրանից հետո շատ նվաճողներ են գալիս, բայց ոչ մեկին չի հաջողվում գտնել գանձերը: Եվ սարի անունը գանձերի պատճառով մնում է Գանձասար:

Սյունյաց աշխարհն իր ընդերքով և իր շքեղ ու հարուստ բնաշխարհով գանձերի երկիր է, և դեպի Գանձասար տանող կիրճի վրա կանգնած Սյունիքի անտառների հսկան՝արջը, պահպանում է Գանձասարը: Գանձերի մուտքի բանալին նրա բերանին է, և վա՛յ նրան, ով կփորձի տիրանալ գանձերի բանալուն...

25 Շրվենանց

Շրվենանց գյուղի վերևում մի գեղեցիկ վայր կա, որին անհիշելի ժամանակներից ժողովուրդը տվել է Մանգի չխուր (այսինքն՝ Մանգի փոս, ձորակ) անվանումը: Թե ինչու է կոչվում Մանգի, ոչ ոք հստակ ասել չի կարող, պարզապես անունը սերնդեսերունդ հասել է մեզ: Ոմանք պատմում են, որ շատ հնում Մանգի (Մանգասար) անունով մեկը փորձել է այգի հիմնել և այդ նպատակով տարբեր հատվածներում փոսեր է փորել, որպեսզի գետնի տակից ջուր հանի:

Մանգի չխուր

Այդպես դուրս է ժայթքել դեղնավուն ջուր, որը, սակայն, պիտանի չի եղել ոռոգման համար: Հետագայում տարածքը հայտնի է դարձել հանքային այդ բուժիչ աղբյուրով, որի ջուրը հարուստ է երկաթով, նատրիումով, կալցիումով և հիդրոկարբոնատային բաղադրությամբ: Տեղացիներն անվանում են նաև Թթու ջուր: Նույնիսկ ամռան տապին աղբյուրի ջուրը պահպանում է իր բնական սառնությունը, իսկ ձմռանը չի սառչում: Տեղացիների մոտ կարծիք կա, որ Թթու ջուրը կապ ունի հարևան Վերին Խոտանան գյուղի ստորգետնյա ջրերի հետ:

Աղբյուրը գտնվում է փոսորակի մեջ և շրջապատված է խիտ անտառով: Աղբյուրի շրջակայքն ամբողջությամբ նարնջագույն տեսք է ստացել, որովհետև դարերով այստեղ թափվող ջուրը հողը հարստացրել է երկաթով և ծծումբով:

Տեղացիները հիշում են գյուղը երեսուն տարի ղեկավարած Արամ պապին (Արամ Օհանյան), ով սիրում էր կրկնել. «ով խմի թթու ջրից, նախագահ կդառնա»: Վերջին գյուղապետ Արմինե Մանուկյանը ծիծաղով հիշում է, որ 18 տարվա հարս է և երբեք այդ ջրից չի խմել: 18 տարի անց որոշել է փորձել ջրից և այդ տարում էլ ընտրվել է գյուղապետ:

Աղբյուրից ոչ հեռու բաց ու հարթ տարածություն է ձգվում, որտեղ մի մենավոր ընկուզենի կա: Տեղացիներն ու դրսից եկած հյուրերը հաճախ են գնում ընկուզենու մոտ՝ նրա շվաքի տակ հանգստանալու:

26

Տանձավեր

Տանձավերի եկեղեցիները խորհրդային տարիներին

Տանձավեր գյուղը մոտ 1200-1500մ բարձրության վրա է՝ Բարգուշատի լեռնաշղթայի հարավարևմտյան փեշերին: Այն Կապանի տարածաշրջանի հնագույն գյուղերից է, հիշատակվում է նաև պատմիչ, Սյունիքի հոգևոր առաջնորդ Ստեփանոս մետրոպոլիտ Օրբելյանի «Պատմության» մեջ Տանձավայր անվամբ, որը Տաթևի վանքին վճարել է 8 միավոր հարկ:

Գյուղում ու նրա շուրջ կան մի շարք քրիստոնեական հուշարձաններ: Տանձավերում են գտնվում 15-րդ դարի Սուրբ Ստեփանոսի անունը կրող միանավ եկեղեցու ավերակները, որի հետ կապված կա մի ավանդազրույց: 1930-ական թվականներին, երբ խորհրդային իշխանությունները փակում էին եկեղեցիները, Տանձավերի կոլեկտիվ տնտեսության նախագահը կամ գյուղապետը ավերում է եկեղեցին ու այդ քարերով իր համար կառուցում տուն ու գոմ: Տեղի բնակիչներն ասում են, որ այդ դեպքից հետո գյուղապետն անիծվում է Աստծուց, ու նրա՝ եկեղեցու քարերով կառուցված տունը չեն վայելում: Բոլորը մահանում են, իսկ տունը մնում է դատարկ: Այդ տունը մինչև հիմա կիսավեր վիճակով գտնվում է գյուղում ու համարվում է անիծված վայր:

Գյուղի պարծանքն է համարվում 1705 թվականին կառուցված Սուրբ Աստվածածին անունը կրող եռանավ բազիլիկ եկեղեցին, որը խորհրդային տարիներին դարձրել էին հացահատիկի պահեստ, իսկ շրջակա միջնադարյան գերեզմանոցի քարերն օգտագործվել էին որպես շինանյութ և կամ ոչնչացրել:

Տանձավերը շրջապատված է սաղարթախիտ անտառներով, ալպիական մարգագետիններով, որտեղ աճում են լեռնային անուշաբույր ծաղիկներ:

27 Տավրուս

Գյուղում պահպանվել է մի գեղեցիկ ավանդազրույց. ասում են՝ սովորություն է եղել, որ հայ և հարևան պարսիկ փահլևանները կամ հսկաները ձեռնամարտի կամ կռիվի են բռնվել: Մի օր հերթական անգամ Իրանից գալիս են փահլևաններ և հյուրընկալվում հայկական տներից մեկում: Հյուրասիրության ժամանակ պարսից հսկաներից մեկը հյուրընկալող հայ կնոջը դիմում է, ասելով՝ գնա ու կանչի իրենց գյուղի փահլևաններին: Եվ երբ հայ կինը տեղից վեր է կենում, կանգնելու ժամանակ հենվում է պարսիկ փահլևանի ոտքին: Այնքան ուժեղ է լինում այդ հայ կինը, որ պարսիկ հսկայի ոտքը ջարդվում է: Այստեղ պարսիկ փահլևանները հասկանում են, որ եթե հայ կինն է այսքան ուժեղ, ապա տղամարդ-փահլևանները ինչպիսին կլինեն, ու առանց մենամարտելու՝ հեռանում են:





Կապանի տարածաշրջանի հուշարձանների թվում իրենց նշանակությամբ և ճարտարապետական լուծումներով աչքի են ընկնում նաև հինավուրց կամուրջ-ները: Գյուղերում տարեց մարդիկ պատմում են Բաղաբերդից Տաթև բանուկ ճանապարհի մասին:

28 Վանեք

Աճանանի կամուրջը

Այսօր էլ այդ ճանապարհի վրա պահպանվել են իջևանատների և կամուրջների հետքեր և, ըստ էության, այդ ճանապարհը միջնադարում հայտնի Մետաքսի մեծ ճանապարհի ճյուղավորումներից մեկի հատվածն է կազմել, որը միջնադարյան Գանձակը կապել է վաճառաշահ Ջուղայի (ներկայիս Ջուլֆան) հետ:

Դեռևս 18-րդ դարի սկզբին Աճանան գետի վրա կառուցվել է մի կամուրջ, որը գտնվում է Վանեք բնակավայրի մերձակայքում՝ 11-րդ դարում կառուցված ավերակի կամրջի արևելյան կողմում: Այստեղ կան տեղական բազալտից կարմրավուն և կապտավուն 110 սրբատաշ քարեր: Կամրջի երթևեկելի մասը սալահատակված է գետաքարերով: Արևելյան կողմի մեջ պահպանվել է պարսկերեն արձանագրություն: Տարեց մարդիկ վկայում են, որ նույնպիսի մի արձանագրություն էլ կար կամրջի հարավային կողմում: Հստակ երևում է տեղադրման որմնախորշը: Այն հավանաբար ընկել և թաղվել է գետի տիղմի մեջ: Պահպանված արձանագրությունը ընթեռնելի է: Այն մեջբերվում է պարսկերեն մի հայտնի բանաստեղծությունից, որտեղ ասվում է.

«Կապրի այս չափն ու կարգը շատ տարիներ դեռ երկար,
Թեկուզ մարմինս անկենդան լինի, հողին հավասար»:

Ավանդազրույցներում կամուրջն անվանել են Թագավորի, Խանի, Աճանանի կաթողիկոսի, Կոլխոզի անվամբ: Սակայն ուշադրության է արժանի կամրջի յուրահատուկ և հազվադեպ անվանումը՝ Կաթողիկոսի կամուրջ: Կամրջի շինարարության թվականը համընկնում է պարսկական շահի հովանավորությամբ Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոս դարձած սուրբ Մովսես Խոտանանցու գահակալման թվականին:

29 Խոտանան

Խոտանան գյուղի անվանումը կապված է Վանի թագավորության Խուտուինի աստծո անվան հետ (հնարավոր է՝ պատերազմի և հաղթանակի աստվածն էր): Նման կարծիք է հայտնել արևելագետ Սերգեյ Ումառյանը: Խոտանանի մասին հիշատակություններ ունեն Ստեփանոս Օրբելյանը, Առաքել Դավրիժեցին, Ղևոնդ Ալիշանը և նույնիսկ օտարազգի գիտնականները, որոնցից է գերմանացի արևելագետ, հայագետ և լեզվաբան Յոզեֆ Մարկվարտը: Վերջինիս կարծիքով՝ Խոտանանը եղել է դիցավայր:

Խոտանան գյուղի անունը

Տարածված է նաև այլ ավանդազրույց՝ կապված գյուղի անվան հետ, որի մասին իր հուշերում ներկայացնում է Խոտանան գյուղից Արտաշես Պետրոսյանը: Ըստ նրա՝ Խոտանան բառը երկու արմատից է բաղկացած՝ արաբերեն «խուդա և նան» բառերից, որոնք թարգմանաբար նշանակում են «աստված և հաց»:

8-րդ դարում, երբ արաբները զավթում են Հայոց երկիրը, մի արաբ ոստիկան, գալով այժմյան Խոտանանի տարածք, հայտնաբերում է հացի հսկայական ամբար՝ լցված ցորենի, գարու հսկայական պաշարներով: Ոստիկանը զարմանքից բացականչում է՝ «խուդա նան», այսինքն՝ «Աստծո հաց»:

Ըստ մեկ այլ ավանդազրույցի՝ գյուղի անվանումը կապված է եղել Խուտայի և Անոնի սիրո լեգենդի հետ: Ըստ լեզվաբան Հ. Աճառյանի՝ Անահիտ աստվածուհու անվան -ան- մասնիկը փոխառություն է շումերերենից և կոչվում է «երկնային մետաղ»:

Պատմական աղբյուրներում հիմնականում հիշատակվում է Խոտանանը, իսկ Վերին և Ներքին Խոտանանները սկսել են հիշատակվել 19-րդ դարից սկսած:

Երկար ժամանակ տարածքը ծառայել է որպես Սյունյաց իշխանների ամառանոց, հողերը միջնադարում եղել են Տաթևի վանական համալիրին հարկատու:

Խոտանան գյուղը նշանավոր զորահրամանատարների գյուղ է համարվում: Իրենց ռազմական տաղանդով աչքի են ընկել Հայաստանի Առաջին Հանրապետության զորահրամանատար, Սիսիանի ուժերի առաջնորդ Պողոս Տեր-Դավթյանը, ռազմական գործիչ Հմայակ Տեր-Դավթյանը, Երկրորդ համաշխարհային պատերազմում ճանաչում ստացած զինվորականներ՝ գնդապետ Մուշեղ Կարապետյանը, ԽՍՀՄ Զինված ուժերի գլխավոր շտաբի գլխավոր օպերատիվ բաժնի պետ Արտաշես Ղազարյանը, փոխգնդապետ Ալեքսանդր Անտոնյանը:

Վաչագան գյուղը հարուստ է սրբատեղիներով: Դրանցից մեկն էլ Քամ խաչն է, որի մոտ աղբյուր կա: Քամ խաչը գտնվում է գյուղից ներքև՝ Վաչագան գետի ափին՝ Խուստուփ տանող ճանապարհի վրա: Խաչի զորությանը հավատում են վաչագանցիների շրջանում:
Հնում, երբ գյուղացիները սար էին գնում, ճանապարհին կանգ էին առնում Քամ խաչի մոտ:

30

Վաչագան

Տարեց կանայք այստեղ կատարում էին յուրօրինակ արարողություններ. աղոթք էին անում՝ հայացքները Խուստուփին հառած, Խաչի աղբյուրին նվիրաբերում քաղցրավենիք, մանր մետաղադրամներ և շարունակում իրենց ճանապարհը:
Քամ խաչ էին գնում նաև տարբեր առիթներով, երբ մատաղ էին խոստանում Աստծուն, կամ էլ երաշտ էր սպասվում: Կանայք հերթով մոտենում էին խաչին, համբուրում քարը, աղոթում, սպիտակ դրամ դնում քարի վրա, մոմ վառում: Նրանք ստիպում էին նույնը կրկնել իրենց փոքրիկներին, քանի որ խաչն աղոթքը հասցնում էր Աստծուն: Երբ երաշտը փչացնում էր բերքը, հացահատիկը, կանայք խմբերով աղոթք ասելով կանաչ խոտ էին վառում Խաչի մոտ, այնուհետև ջուր լցնում Խաչի վրա: Իսկ երկար տևած անձրևների ժամանակ, երբ բերքը կամ խոտը փչանում էր, աղոթք շշնջալով կրակ էին վառում Խաչի վրա: Շատ հաճախ այնպես էր պատահում, որ բնությունը իրոք փոխում էր իր ընթացքը՝ ոգևորելով մարդկանց, և նրանց թվում էր, թե իրենց մոգական գործողությունների ազդեցությունն է: Խաչի զորությանը հավատացող տարեցներն անպայման ոտքով հասնում էին Քամ խաչ, աղոթք մրմնջում, աքլորը ձեռքին՝ չորս անգամ պտտվում խաչի շուրջը և կատարում զոհաբերություն: Աքլորի կտրված գլուխն ու ոտքերը դնում էին խաչի մոտ՝ քարի վրա, և արյունով խաչ անում այն մարդու ճակատին ու կրծքին, ում համար նախատեսված էր մատաղը: Այնուհետև մատաղացուն տուն տանելով՝ եփում և բաժանում էին 7 մասի, յուրաքանչյուր կտոր փաթաթում լավաշի մեջ և, երեխաների ձեռքին դնելով, ուղարկում գյուղի տարեց և հիվանդ մարդկանց տները: Մատաղ վերցնողները, սովորության համաձայն, ասում էին. «Ընդունելի լինի»: Սա մի արարողություն է, որ եկել է դարերի խորքից և այսօր էլ կիրառվում է ամենուր՝ Հայաստանի ամեն անկյունում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Եվ այսպես, ավարտվեց Լեգենդների արահետի գաղտնիքների մասին մեր փոքրիկ արշավը, բայց դեռ շատ բան կա պատմելու: Զարմանալիորեն հեշտ է բացահայտել հարավային Հայաստանը՝ հաշվի առնելով, որ տարվա մեծ մասն այստեղ բարենպաստ եղանակ է: Յուրաքանչյուրս կարող ենք դառնալ ժամանակակից Ինդիանա Ջոնս՝ արկածային ժամանց կազմակերպելով այստեղ և, միաժամանակ, մեր լուման ներդնելով Հայաստանում ներգնա զբոսաշրջության զարգացման գործում:

HIKEArmenia-ն և Անդրկովկասյան արահետը տեղեկատվական հիմնական աղբյուր կհանդիսանան: Դուք կարող եք նաև հավելյալ տեղեկատվություն գտնել քարտեզ-ուղեցույցում, որը կհրապարակվի Cartisan-ի կողմից. հետևեք Լեգենդների արահետի ֆեյսբուքի (@LegendsTrailSyunikArmenia) և ինստագրամի (@legends_trail) էջերին:

Լեգենդների արահետն ստեղծվել է «ԵՄ-ն զբոսաշրջության համար. արկածային տուրիզմի զարգացում պատմական Սյունիքում» ծրագրի շրջանակում «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ և «ԱՐԿ» բնապահպանական ՀԿ-ի հետ համագործակցությամբ: